

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
20	Դեկտեմբեր	2021 թ.		Բ	9853263997
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
20	Դեկտեմբեր	2021 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			27 Հունվար, 2021 թ.	ՀԳԴ-5-21	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ. շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹՍՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալին վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամկետային քանակը	Միավորի գինը	Ձեռք(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-վրացերեն-հայերեն բանավոր թարգմանություն	Ժամ	2.5	6000		15000
2	Հայերեն-վրացերեն-հայերեն բանավոր թարգմանություն	Ժամ	2	6000		12000
3	Հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	Էջ	1.5	2200		3300
4	Հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	Էջ	20.5	2200		45100
5	Ճապոներեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	1.5	10000		15000
Ընդամենը						90400

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)

KHACHATRYAN TIGRAN
3814880340

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/12/2021 11:54:27

Ծառայություն (աշխատանք) ստացող

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

21/12/2021 17:42:17

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

15 նոյեմբերի, 2021 թ.

ք.Իջևան

Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ. Ժ. Գրիգորյանս, ուսումնասիրելով Ջազա Մոթիաշվիլիի հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2021 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 17.20-ին, ՀՀ ԱԱԾ Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ՀՀ ոստիկանության ՏՄ վարչության Նոյեմբերյանի բաժին է բերման ենթարկվել Վրաստանի Հանրապետության քաղաքացի Ջազա Իրակլիի Մոթիաշվիլին, ծնված՝ 1982 թվականի նոյեմբերի 7-ին, հաշվառված է ք. Թբիլիսի Գլղանի 5 միկրոշրջան 3-րդ շենք 5-րդ փուն հասցեում, ով 2021 թվականի հունիսի 22-ից հետախուզվում է Հունաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից՝ Հունաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 26, 27, 45, 94, 336 և 380-րդ հոդվածների հատկանիշներով, խափանման միջոցը՝ կալանավորում:

2021 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 20.15-ին Ջազա Մոթիաշվիլին ձերբակալվել է և տեղափոխվել ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ:


Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Ջազա Մոթիաշվիլին ազգությամբ վրացի է, չի տիրապետում հայերեն լեզվին, իսկ Նառա Ֆարմանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ջազա Մոթիաշվիլին հանձնման միջնորդության և վրացերեն լեզվից հայերեն լեզվով և հակառակը թարգմանություններ իրականացնելու նպատակով բանավոր թարգմանություններ իրականացնելու համար որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Նառա Ֆարմանյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AN 0619509, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ 20.05.2000թ. ՀՀ արդարադատության նախարարի տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ

Թարգմանություն կատարելը պատժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու փարի ժամկետով:

Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազ,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝  Լ. Գրիգորյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Նաոա Ֆարմանյան

« 15 » Էպրիլի 2021 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

19 նոյեմբերի, 2021 թ.

ք.Իջևան

Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ. Ժ. Գրիգորյանս, ուսումնասիրելով Սերգո Ջեմալի Չելիձե Ախորաձեի հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2021 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 16.15-ին, ՀՀ ԱԱԾ Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ՀՀ ոստիկանության ՏՄ վարչության Նոյեմբերյանի բաժին է բերման ենթարկվել Վրաստանի Հանրապետության քաղաքացի Սերգո Ջեմալի Չելիձե Ախորաձեն, ծնված՝ 1977 թվականի մարտի 12-ին, ով 2020 թվականի հուլիսի 31-ից հետախուզվում է Ֆրանսիայի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից՝ Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 222-23 222-44, 222-45, 222-47, 222-48, 222-48-1, 222-24, 132-75-րդ հոդվածների /բռնաբարությունը, որը կատարվել է գենքի սպանալիքի ներքո հարկանիշներով, խափանման միջոցը՝ կալանավորում:


2021 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 19:00-ին, Սերգո Ջեմալի Չելիձե Ախորաձեն ձերբակալվել է և տեղափոխվել ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Սերգո Ջեմալի Չելիձե Ախորաձեն ազգությամբ վրացի է, չի տիրապետում հայերեն լեզվին, իսկ Նառա Ֆարմանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սերգո Ջեմալի Չելիձե Ախորաձեի հանձնման միջնորդության և վրացերեն լեզվից հայերեն լեզվով և հակառակը թարգմանություններ իրականացնելու նպատակով դատական նիստին բանավոր թարգմանություններ իրականացնելու համար որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Նառա Ֆարմանյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AN 0619509, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ 20.05.2000թ. ՀՀ արդարադատության նախարարի տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

Թարգմանություն կատարելը պարժվում է փուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու փարի ժամկետով:

Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազ,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝  Վ. Տ. Գրիգորյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանավարձության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Նաոա Ֆարմանյան

«.....19»..... 2021 թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

24 նոյեմբերի 2021թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության դատախազ Գ.Մելիքյանս, ուսումնասիրելով Կիպրոսի Հանրապետության (այսուհետ՝ ԿՀ) իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻԻ նկատմամբ հանձնման համար կալանավորում կիրառելու մասին որոշումը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2021 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ իրավապահ մարմինների կողմից բերման է ենթարկվել և ձերբակալվել ԿՀ իրավասու մարմինների կողմից հետախուզվող ԻԻՀ քաղաքացի ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻՆ, ով հետագայում կալանավորվել է:

2021 թվականի հոկտեմբերի 21-ին և նոյեմբերի 16-ին ստացվել է ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻՆ հանձնելու մասին ԿՀ իրավասու մարմնի միջնորդությունը՝ կից փաստաթղթերով:

ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 2021 թվականի նոյեմբերի 23-ի որոշմամբ ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻՆ հանձնումը ԿՀ իրավասու մարմիններին թույլատրվել է:


Նկատի ունենալով, որ ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻՆ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ ՀՐԱՆՈՒՇ ԹԹԱԽՄԱՍՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառնություն է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. ԱԿԲԱՐ ԿԱՐԻՄԻ հանձնման թույլտվության մասին որոշման պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր AN0780981, դիպլոմ թիվ 013781) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության
միջազգային-իրավական համագործակցության
վարչության դատախազ



Գ.Մելիքյան

Մրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նսխատրեւված պարտախանութության մասին նսխազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Լ.Թախմասյան

«24».....11..... 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

06 դեկտեմբերի 2021թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Մ.Մարտիրոսյանս, թիվ 13751721 քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելիս

ՊԱՐՉԵՑԻ՝

Թիվ 13751721 քրեական գործով Հաշեմ Վադուդի Թաշաքորի Քուրայեմին, Մեհրան Մահմուդի Սադեղիին, Սեյեդ Հոսեյին Սեյեդ Սաբգալի Նուրուլահինի, Արաշ Մորթեգալի Թավաքոլիին, Հասան Ահադի Ալիգադեհին, Հասան Մահդի Փարվինիին, Ամիրհոսեյին Ռասուլի Բարազադեհին, Էմադ Հասանի Հոսեյնխանին, Յասին Ֆարաջի Թաբարիին, Ամիրոեգա Քավեհի Ասքարիանին, Փեդրամ Իրաջի Դավուդիին, Փարսա Բիժանի Ֆահիմիբանդփեյին հանդիսանում են ԻԻՀ քաղաքացիներ և չեն տիրապետում գրավոր և բանավոր հայերեն լեզվին, ուստի թիվ 13751721 քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին 03.12.2021թ. որոշումը և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու վերաբերյալ 03.12.2021թ. թիվ 15/1239քր-21 գրությունը մեղադրյալներին իրենց հասանելի լեզվով՝ պարսկերեն լեզվով տրամադրելու նպատակով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ:

Նկատի ունենալով, որ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ուստի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 13751721 քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին 03.12.2021թ. որոշման և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու վերաբերյալ 03.12.2021թ. թիվ 15/1239քր-21 գրության պարսկերեն լեզվով գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին: (ՀՀ քաղաքացու անձնագիր AN0780981, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ N PBO13781՝ տրված 05.07.1990թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության

Ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:


«Վախճանի» դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ



Մ.Մարտիրոսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«...06...»...12...2021թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

13.12.2021թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ.Մելիքյանս, ուսումնասիրելով թիվ 58157920 քրեական գործով ՀՀ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

27.10.2020թ. ՀՀ գլխավոր դատախազությունից Ճապոնիայի իրավասու մարմիններին թիվ 58157920 քրեական գործով ուղարկվել է քննչական պահանջ:

10.12.2021թ. Ճապոնիայի իրավասու մարմիններից թիվ 58157920 քրեական գործով ստացվել է գրություն ճապոներեն լեզվով:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել չինարեն, իսկ ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58157920 քրեական գործով քննչական պահանջի վերաբերյալ Ճապոնիայի իրավասու մարմիններից ստացված փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՀԱՍՄԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ (ID 010716397, դիպլոմ AB 188924) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դարախազ



Գ. Մելիքյան

Արացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարանախանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Հասմիկ Գասպարյան



«13» 12. 2021թ.